


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Պօղոսին հրաշալի ճամբորդութիւնները



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 59 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Պօղոս եւ Շիլա,
Յիսուսի ծառաները,
բանտն էին: Ո՛չ,
անոնք յանցանք
չէին գործած, միայն
սատանայ մը հանած
էին կնկայ
մը մեջէն:



1

Անոնք ցոյց
տուին հեթանոս
կուռք պաշտող
ժողովուրդին, որ
Եփեսոս կ'ապրէր,
իրաւ Աստուծոյ
եւ Իր Որդիին
Յիսուսի
ուժը:




2


Այդ
պատճառով անոնք
ծերբակալուեցան,
ծեծուեցան եւ
բանտարկուեցան:




3




Թերեւս կը
կարծես, որ Պօղոս
եւ Շիլա զայրացած
եւ բարկացած
էին: Սակայն ոչ:
Այլ հակառակը,
կէս գիշերին
անոնք նստան եւ
փառաբանականներ
երգեցին Աստուծոյ:



4




Մնացեալ
բանտարկեալներն
ալ իրենց
ունկնդրեցին:



5

Յանկարծ, երգելը կանգ առաւ: Աստուած
երկրաշարժ մը դրկեց, որ բանտը շարժէ: Ամէն
դռները բացուեցան բոլորին շղթաները թուլացան:




6



Օ'հ, օ'հ: Բանտի
պտասխանատուն
վստահ էր, որ բոլոր
բանտարկեալները
փախած են:
Նոյնիսկ եթէ մէկ
հոգի փախած ըլլար
ինքը մահապատիժի
պիտի ենթարկուէր:
Դժբախտաբար, ան
դուրս հանեց իր
սուրը: Ան կրնար
ինքզինք սպանել
այս եղածին
համար:

7

Բայց Պօղոս կանչեց.
"Վնաս մի հասցներ
դուն քեզի, որովհետեւ
մենք հոս ենք": Երբ
ան իրենց տեսաւ
ըսաւ. "Պարոններ,
ի՞նչ պետք է ընեմ
որ ազատիմ":




8

Ուրեմն ըսին. "Չաւատայ Տիրոջ Յիսուս Զրիստոսի, եւ դուն պիտի փրկուիս, դուն եւ քու տունդ": Բարեփախտաբար, բանտի պատասխանտուն հեռացաւ:



9

Յաջորդ օրը Պօղոս եւ Շիլա ազատ արձակուեցան եւ տարբեր քաղաքներ ճամբորդեցին, Յիսուսին մասին պատմելով ժողովուրդին: Շատեր հաւատացին, ուրիշներ փորձեցին վնաս հասցնել իրենց: Սակայն Աստուած իր ծառաներուն հետն եր:




10

Գիշեր մը, Պօղոս ժամերով քարոզեց: Երիտասարդ մը, որ բաց պատուհանին առջեւ կը նստեր խոր քունի մէջ մտաւ: Կրնաս գիտնալ ինչ եղաւ:




11

Ամէն մարդ գիտեր, որ երիտասարդը մեռաւ: Սակայն Պօղոս գնաց եւ փաթօնեցաւ անոր եւ ըսաւ. "Իր կեանքը իր մէջն է": Անոնք երիտասարդը ողջ ներս բերին եւ շատ ուրախ էին:




12

Պօղոս եւ Շիլա շատ մը արկածներ ունեցան իրենց ճամբորդութեան ընթացքին դեպի Եւրոպա: Պօղոս մեծ արկածներէն մէկը տեղի ունեցաւ նաուուն վրայ:




13

Այն ատեն պողպատեայ հսկայ նաւեր չկային, այլ արագաստանաւեր, որոնք դիւրութեամբ կը ջախջախուէին փոթորկոտ օդին:




14




Պողոս նաւուն վրայ էր, որովհետեւ անգամ մը եւս ձերբակալուած էր: Այս անգամ ան Հռոմի կայսրին առջեւ պիտի բերուէր: Հռոմ այդ ժամանակի աշխարհի մայրաքաղաքն էր:

15




Չօրաւոր փոթորիկներ նաւը դանդաղեցուցին, կարծես սոսկալի փոթորկոտ օր մը կը սպասէր: Շատ դժուար պտոյտ մըն էր Պողոսի եւ մնացեալ բանտարկեալներու՝ ինչպէս նաեւ նաւաստիներուն:

16




"Մարդիկ, ես կը տեսնեմ, որ այս ճամբորդութիւնը փորձանքով պիտի աւարտի", զգուշացուց Պողոսի: Նաւուն հրամանատարը կարեւորութիւն չտուաւ անոր խօսքին:

17



Եւ դէպի ծով ուղղուեցաւ: Երբ հսկայ փոթորիկ մը անոնց զարնուեցաւ, անոնք պարաններով փաթթեցին նաւը յուսալով, որ չի կտորի: Եթէ նաւը կտորեր բոլորին համար ալ ջուրը գերեզման պիտի ըլլար:

18



Նաւը ծանրացած էր եւ նաւուն հրամանատարը հրամայեց բոլորը, որպէսզի թթեւեցնեն նաւը: Երրորդ օրը անոնք ամեն ինչ նաւուն մէջէն ծով նետած էին: Թերեւս այդ կ'օգնէր:

19



Այդ գիշեր, հրեշտակ մը կեցաւ Պողոսին քով ըսելով, որ ամեն ինչ լաւ պիտի ըլլայ:


20

Բոլորը քաջալերուեցան, երբ Պողոս ըսավ. "Միրտ առեք մարդիկ, որովհետև ես կը հաւատամ, որ Աստուած ամեն ինչ լաւ պիտի ընէ ինչպէս որ ինձի ըսաւ:



21

Եւ մենք մօտ կղզիի մը վրայ պետք է կանգ առնենք:"



22

Քանի մը օր ետք, նաւը Մալթա կղզիին մօտ կանգ առաւ: Նաւը զարնուեցաւ ժայռերուն եւ չախչախուեցաւ:




23

Նաւուն հրամանատարը հրամայեց, որպէսզի լողալ գիտցողները նետուին եւ լողալով ցամաք երթան: Մնացեալը նաւուն կտորածներուն վրայ նաւարկելով ցամաք հասան:




24

Մալթայի մէջ, Աստուած իր ուժը ցոյց տուաւ: Երբ անոնք տախտակ կը հաւաքէին կրակի համար, իժ մը խայթեց Պողոսին: Ժողովուրդը կարծեց, որ ան պիտի մեռնի:




25

Բայց իժին խայթոցը անոր վնաս չհասցուց: Ժողովուրդը կարծեց, որ Պողոս Աստուած է: Շատ մը հիւանդ մարդիկ քովը եկան, եւ Աստուած առողջացուց անոնց Պողոսի աղօթքէն ետք:




26

Վերջապես, Պողոս Հռոմ հասաւ: Երկու տարի առաւ, որ իր դատական հարցը կարգի դրուի: Այդ ժամանակի ընթացքին Պողոս տուն մը վարձեց, ուր հիւրեր ընդունեց:




27

Գիտե՞ս, թէ ինչ կը պատմեր Պողոս իր այցելուներուն: Աստուծոյ արքայութիւնը: Տէր Յիսուս Զրիստոս, ինչպէս իր բոլոր ճամբորդութիւններուն մէջ:




28

"Ես լաւ կռիւր կռուեցայ, ես մրցումը վերջացուցի, ես իմ հաւատքս պահեցի", գրեց Պողոս Հռոմէն: Սուրբ գիրքը մեզի կը պատմեր ինչպէս անոր կեանքը վերջ գտաւ, բայց ուրիշ յուշեր կ'ըսեն, թէ Պողոս գլխատուեցաւ Հռոմի մէջ, Ներոն կայսրին հրամանով:



29

Պողոս մահացաւ ապրած ըլլալով հաւատարիմ ծառան Աստուծոյ, եւ բոլորին պատմելով Յիսուս Զրիստոսի մասին:



30

Պողոսին հրաշալի ճամբորդութիւնները
 Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:
 Կը գտնուի հետեւեալին մէջ
 Գործք Առաքելոց 16, 27, 28

"Ընու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Սաղմոս 119:130



Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի եւ յիշուի վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
 Յովհաննու 3:16